Ահազանգման և նախազգուշացման հաղորդագրությունների նմուշներ

Ստորև բերվում են ահազանգման հաղորդագրության նմուշներ, որոնք ահազանգող գործակալությունները կարող են որպես ուղեցույց օգտագործել տեղական մակարդակի արտակարգ իրավիճակին համապատասխան գործելու համար: Սույն նմուշները սպառիչ չեն: Վերջնական հաղորդագրությունները պետք է միշտ կազմվեն կոնկրետ դեպքի առանձնահատուկ կարիքներին համապատասխան:

Տարահանման հաղորդագրության նմուշներ

Երկար հաղորդագրություններ

• Սա [Agency] է դեպի [location] պարտադիր տարահանման հրահանգով: Խնդրում ենք կատարել հետևյալ պաշտպանական գործողությունները և անմիջապես հեռանալ: 1. Հավաքեք ընտանիքի բոլոր անդամներին: 2. Հավաքեք բոլոր ընտանի կենդանիներին: 3. Վերցրեք միայն անհրաժեշտ իրերը: 4. Համոզվեք, որ ձեզ հետ վերցնում եք ամբողջ անհրաժեշտ դեղորայքը: 5. Անջատեք ձեր տան բոլոր էլեկտրական սարքերը և լույսերը: 6. Կողպեք ձեր տունը: Տարահանման ուղին հետևյալն է՝ [Evacuation Route]: Տարահանման կենտրոնը բաց է [Name and Location of Evacuation Center] հասցեում: Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք միացնել տեղական ռադիո և հեռուստատեսային ալիքները, ստուգել **[url]** ինտերնետային հասցեով կամ զանգահարել **[[###-###-####]** համարով:

• [Agency] հրահանգ է տալիս պարտադիր տարահանման դեպի [location]: Եղանակի կանխատեսման ազգային ծառայությունը նախազգուշացնող հաղորդագրություն է տարածել [location] սպասվող հեղեղումների մասին: Վտանգի գոտում գտնվող բնակավայրերի բոլոր բնակիչները պետք է անմիջապես տարահանվեն: Տարահանման կենտրոնը/ապաստարանը գտնվում է [location]: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար, անցնել՝ [insert resource]: Թարմացվող հաղորդագրություններ ստանալու համար, լսել [radio station] ռադիոալիքները:

Կարճ հաղորդագրություն

• Տարահանման հրահանգ անտառային հրդեհների սպառնալիքի դեպքում- Տարահանման վայրը՝ [location] – Անմիջապես հեռանալ – Մանրամասները՝ [Agency] կայքում:

Տեղում ապաստան գտնելու մասին հաղորդագրության նմուշներ

Երկար հաղորդագրություններ

• Սա [Agency] է, որը հրահանգում է [location] բնակիչներին պարտադիր կերպով ապաստան գտնել տեղում, ինչը պայմանավորված է վտանգավոր նյութերի արտազատումներով: Անմիջապես ձեռք առնել ինքնապաշտպանական միջոցներ: 1. Անմիջապես մտեք ձեր տուն և դուրս չգաք տնից կամ շենքից: 2. Ընտանի կենդանիներին ձեզ հետ տուն տարեք միայն այն դեպքում, եթե կարող եք արագ դա անել: 3. Փակեք բոլոր դռներն ու լուսամուտները: 4. Անջատեք բոլոր օդափոխիչ և ջեռուցման համակարգի փչակները: 5. Փակեք բուխարիի փակիչները: 6. Ձեզ հետ վերցրեք ռադիո, լապտեր, սնունդ, ջուր և դեղորայք: 7. Զանգահարեք 911, եթե ձեզ մոտ արտակարգ իրավիճակ է: Ձեզ կտեղեկացնեն, երբ այս վտանգավոր իրավիճակն անցնի, և ապահով լինի դուրս գնալը ու սովորական գործունեությամբ զբաղվելը: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք միացնել տեղական ռադիո և հեռուստատեսային ալիքները, այցելել **[url]** կամ զանգահարել **[###-###-####]** համարով:

• Հրշեջ ծառայության բաժինը խնդրում է բոլորին, ովքեր գտնվում են [location]-ից ½ մղոն շառավղով տարածության վրա, մտնել շինության ներսը և դուրս չգալ այնտեղից, ինչը պայմանավորված է թունավոր նյութերի արտազատման պատճառով: Մնացեք ներսում, փակեք ձեր լուսամուտները, անջատեք օդափոխության համակարգերը և ներս բերեք ձեր ընտանի կենդանիներին: Լրացուցիչ հրահանգների համար, այցելեք՝ **[link]:**

Կարճ հաղորդագրություն

• Թունավոր արտազատումներ: [location] վայրից ½ մղոն շառավղով բոլորին: Մտնել շենք: Դուրս չգալ շենքից: Հետևեք նորությունների թարմացումներին:

Եղանակային պայմանների մասին ահազանգող հաղորդագրության նմուշներ

Երկար հաղորդագրություն

• Սա [Agency] է, որ հաղորդագրություն է տարածում [location] տարածքում հավանական հեղեղումների պատճառով պարտադիր տարահանման մասին: Ձեռնարկեք հետևյալ պաշտպանական գործողությունները և անմիջապես հեռացեք: 1. Հավաքեք ընտանիքի բոլոր անդամներին և այլ անձանց: 2. Հավաքեք բոլոր ընտանի կենդանիներին: 3. Վերցրեք միայն անհրաժեշտ իրերը: 4. Համոզվեք, որ վերցրել եք ձեզ հետ անհրաժեշտ ամբողջ դեղորայքը: 5. Անջատեք ձեր տան բոլոր էլեկտրական սարքավորումները և լույսերը: 6 Կողպեք ձեր տան

դուռը: Տարահանման ուղին հետևյալն է՝ [Evacuation Route]: Տարահանման կենտրոնը բաց է [Name and Location of Evacuation Center] հասցեում: Լրացուցիչ տեղեկատվության համար, խնդրում ենք միացնել տեղական ռադիո և հեռուստատեսային ալիքները, ստուգել **[link]** ինտերնետային հասցեով կամ զանգահարել **[[###-###-####]** համարով:

• Եղանակի կանխատեսման ազգային ծառայությունը զգուշացնում է առաջիկա 24 ժամում [location] սպասվելիք հեղեղումների մասին: Ոստիկանությունը հորդորում է սույն տարածքում բնակվող բոլոր մարդկանց ցանկացած պահի պատրաստ լինել տարահանման: Տարահանման նախապատրաստության մասին տեղեկատվությունը՝ here: Տեղեկությունը պարբերաբար կթարմացվի:

Կարճ հաղորդագրություն
• Ջրհեղեղի վտանգի նախազգուշացում [location]: Խուսափել այդ շրջանից: Շրջանցեք այդ տարածքը: Հետևեք նորությունների թարմացումներին:

Ակտիվ հրաձգության մասին հաղորդագրության նմուշ
Երկար հաղորդագրություն
• Սա [Law Enforcement Agency] է, հաղորդում ենք [location] ակտիվ հրաձգության մասին: Խուսափեք այդ տարածքից: Եթե գտնվում եք [location] մոտ տեղում, մտեք շինության ներս, մնացեք ներսում և ձեռք առեք հետևյալ պաշտպանական քայլերը. 1. Անհապաղ անցեք շինության ներս և մնացեք այնտեղ: 2. Ընտանի կենդանիներին ձեզ հետ տարեք ներս միայն այն դեպքում, եթե կարող եք դա արագ անել: 3. Փակեք և կողպեք բոլոր դռներն ու լուսամուտները: 4. Անհապաղ զանգահարեք 911, եթե ձեզ մոտ արտակարգ իրադրություն է կամ կլսեք կամ կտեսնեք ձեր գտնվելու վայրին մոտ որևէ կասկածելի գործողություն: Երբ ձեր ապահովությանն այլևս վտանգ չի սպառնա, ձեզ կտեղեկացնեն: Լրացուցիչ տեղեկատվության համար, խնդրում ենք միացրած պահել տեղական ռադիո և հեռուստատեսային ալիքները, այցելել **[url]** կամ զանգահարել **[###-###-####]** համարով:

• Ժամը 11-ի դրությամբ Ոստիկանությունը հորդորում է հանրությանը խուսափել [insert location]: Ոստիկանության աշխատակիցները գտնվում են ակտիվ հրաձգության վայրում: Տարածքում գտնվող բոլոր մարդկանց խորհուրդ ենք տալիս ապաստարան գտնել և անջատել հեռախոսների ձայնը: Հրաձիգի հետ շփման մեջ մտնելու դեպքում Փախեք, Թաքնվեք, Պայքարեք: Լրացուցիչ

տեղեկատվության համար, խնդրում ենք այցելել [link] և պատրաստ լինել հետագա ցուցումների:

Կարճ հաղորդագրություն

Ակտիվ հրաձգություն [location]-ում: Խուսափեք տարածքից կամ Փախեք, Թաքնվեք, Պայքարեք: Հետևեք նորությունների թարմացումներին: